

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԿՈՆԳՐԵՍԻՆ

ՎԱՐՇԱՎԱ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ

Հոգով ողջունում ենք խաղաղության կողմնակիցների Համաշխարհային երկրորդ վեհաժողովի բացումը և ցանկանում ենք կատարյալ հաջողություն նրա առջև դրված ազնիվ խնդիրների լուծման գործում:

Մեր լավագույն ցանկություններն ենք հղում նաև Վեհաժողովի պատգամավորներին, որոնք տոգորված են երկրի վրա կայուն խաղաղություն հաստատելու վեհ գաղափարներով և ցանկանում են մշակել այնպիսի՛ ծրագրեր, որոնք ի վիճակի լինեն ապահովել մարդկության համար երջանիկ և խաղաղ կյանք:

Մենք ցանկանում ենք հավատիացնել Վեհաժողովի պատգամավորներին, որ Հայաստանյայց Եկեղեցին, որ դարեր շարունակ աղոթել է իր ժողովրդի և ամբողջ մարդկության բարօրության համար, այս վայրկյանին ամբողջապես Ձեզ հետ է, Ձեզ հետ բաժանում է Ձեր բարձր գաղափարական ձգտումները, Ձեր փութեռանդ աշխատանքն ի շահ մարդկության: Ձեզ հետ հուսատեղ ընթանում է նաև ողջ հավատացյալ հայ ժողովուրդը, անցյալում բազմաթիվ, իսկ այժմ ոչ այնքան մեծ հայ ժողովուրդը, որը մշտապես պայքարել է իր հոգեկան և ֆիզիկական անկախության համար, կրելով աներևակայելի տառապանքներ, այժմ և միշտ լցված է խաղաղության և ժողովուրդների եղբայրության բարձր գաղափարների համար պայքարելու սրբազան ցանկությամբ: Հավատացյալ հայ ժողովուրդը Ձեզ հետ է եղել երեկ և այսօր, նա Ձեզ հետ կլինի և առաջիկայում և Ձեզ հետ միասին պատրաստ է անձնազոհ պայքարել խաղաղության հաղթանակի համար երկրի վրա, մարդկության երջանկության համար:

Մենք աղոթում ենք առ Աստված Ձեր բարձր և ազնիվ գործի հաղթանակի համար: Թող օրհնվի Ձեր անշահախնդիր և սրբազան ձեռնարկը և կատարյալ հաջողությամբ ավարտվի այն:

ԳԵՈՐԳ Զ.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

19 նոյեմբերի 1950 թ.
Ս. Էջմիածին